ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-356-02.10.2013,14.11.2013-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում.

1. 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«1. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 55 տարին լրացած անձին.

1) եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում (թիվ 1 ցուցակ), մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 7 օրացուցային տարի 6 օրացուցային ամիսը աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք,

2) եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող *պաշտոններում* (թիվ 3 ցուցակ) և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

Կանանց, մինչև սույն մասով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալը, կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.

Ծննդյան տարեթիվ	Տարիք	Կենսաթոշակի անցնելու տարեթիվ
01.01.1960-30.06.1960	54,5	2014
01.07.1960-31.12.1960	55	2015

2. Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է 59 տարին լրացած անձին.

1) եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, առնվազն 20 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում (թիվ 2 ցուցակ), մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 10 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներ,

2) եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին աշխատել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող *պաշտոններում* (թիվ 4 ցուցակ) և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:»:

2. 5-րդ մասը «ցուցակները» բառից հետո լրացնել «, *պաշտոնների* թիվ 3 և թիվ 4 ցուցակները» բառերով:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 4-րդ կետում «տարիքային» բառը փոխարինել «կերակրողի մահվան օրվա դրությամբ տարիքային» բառով.

2. 5-րդ կետից հանել «կամ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի» բառերը.

3. 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ կետով.

«5.1) ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամին՝ անկախ տարիքից, եթե նա զբաղված է մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած՝ սույն հոդվածով կենսաթոշակի իրավունք ունեցող՝ երկու ծնողին կամ միակ ծնողին կորցրած երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում.»,

4. 6-րդ կետը ճանաչել ուժը կորցրած,

5. 6-րդ կետին հաջորդող 3-րդ պարբերությունում «և 6-րդ կետերում նշված անձանց և 5-րդ կետում նշված՝ ընտանիքի այլ գործունակ չափահաս անդամի» բառերը փոխարինել «կետում նշված անձանց» բառերով.

6. 6-րդ կետին հաջորդող 4-րդ պարբերությունում «կետում» բառը փոխարինել «և 5.1-րդ կետերում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1. 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի և կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է:

Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի և կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

Մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է Կ=Հ+ (Ս X Ա) X Գ բանաձևով, իսկ 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Կ=Հ+ (10 X Ա+(Ս-10) X Ա1) X Գ բանաձևով, որտեղ՝

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը,

Ս-ն՝ աշխատանքային ստաժի տարիները,

Ա-ն՝ մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Ա1-ը՝ 10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,

Գ-ն՝ կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

2. Կենսաթոշակառուի անձնական գործակիցը սահմանվում է՝

1) մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,1.

2) 11-ից մինչև 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,01.

3) 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի մեկ տարվա համար՝ 0,02:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկվում է՝

ա) մինչև 10 տարվա (ներառյալ) ստաժի առկայության դեպքում՝ Գ=0,1 X Ս բանաձևով.

բ) 11-ից մինչև 40 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1+0,01 X (Ս-10) բանաձևով.

գ) 40 տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում՝ Գ=1.3+0,02 X (Ս-40) բանաձևով:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը չի կարող գերազանցել 2-ը:».

2. 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

Հոդված 4. Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ մասով.

«9. Աշխատանքային ստաժում արտոնյալ պայմաններով հաշվառվող ժամանակահատվածները, այդ ժամանակահատվածները հաշվարկելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Զինվորական ուսումնական հաստատությունում սովորող, քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող կենսաթոշակառուի կենսաթոշակը վճարվում է (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է) նաև տվյալ կազմակերպության ղեկավարի վավերացրած լիազորագրով:»:

Հոդված 6. Օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասը «բուժվելու» բառից հետո լրացնել «, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու» բառերով:

Հոդված 7. Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում «դադարեցնելու ամսվան հաջորդող» բառերը փոխարինել «դադարեցնելու ամսվանից սկսած՝» բառերով:

Հոդված 8. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սկսած 2014 թվականի հունվարի 1-ից՝ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում՝

1) առաջին խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով.

2) երկրորդ խմբի համար՝ հիմնական կենսաթոշակի 20 տոկոսի չափով:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ին:

1. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված աշխատանքային կենսաթոշակների չափերը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաշվարկվում են Օրենքով սահմանված կարգով՝ հաշվի առնելով հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը և կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

2. Եթե հաշվարկված աշխատանքային կենսաթոշակի չափը (ներառյալ՝ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին Օրենքով տրվող հավելումը) ցածր է նախկին չափից, ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

2013 թվականի դեկտեմբերի 4-ին 1-ին ընթերցմամբ ընդունված՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ ԱԺ պատգամավորների կողմից կատարված առաջարկությունների վերաբերյալ

ՀՀ	Առաջարկության հեղինակը	Առաջարկությունը	Եզրակացություն
1.	Նիկոլ Փաշինյան	Օրենքը լրացնել նոր՝ 54.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքով սահմանված կարգով վճարվող պետական կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած՝ աղքատության վերին ընդհանուր գծից: ՀՀ Պետական բյուջեի մասին օրենքով միջոցներ են նախատեսվում աղքատության վերին ընդհանուր գծից ցածր կենսաթոշակների տարբերությունը աղքատության վերին ընդհանուր գծի հետ՝ փոխհատուցելու համար: Որպես հաշվարկային ընդունվում և Բյուջեի նախագծի հիմքում դրվում է՝ ընթացիկ բյուջետային տարում հրապարակված աղքատության վերին ընդհանուր գիծը:»:	Չի ընդունվել:
2.	Թևան Պողոսյան	Առաջարկում եմ. 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հոդված 1-ի 1-ին մասի 1-ին կետից հանել «մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 7 օրացուցային տարի 6 օրացուցային ամիսը աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում» բառերը: 2. Նախագծի հոդված 1-ի 1-ին մասի առաջին պարբերությունից հետո ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.	Առաջարկությունը չի ընդունվել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող օրենսդրությամբ սահմանված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատատեղերում աշխատելը այսօր ոչ միշտ է առաջացնում աշխատունակության կորուստ՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, արտադրական գործընթացների կատարելագործումը: Իսկ այն աշխատատեղերը, որոնք

<table>
<tr><th>ՀՀ</th><th>Առաջարկության հեղինակը</th><th>Առաջարկությունը</th><th>Եզրակացություն</th></tr>
<tr><td></td><td></td><td>«Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը 1-7 օրացուցային տարի 6 օրացուցային ամիս առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատած անձանց արտոնյալ պայմաններով կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.
<table>
<tr><th>Առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում աշխատանքային ստաժ</th><th>Արտոնյալ կենսաթոշակի անցնելու տարիք</th></tr>
<tr><td>7 տարի 6 ամիս</td><td>55</td></tr>
<tr><td>6 տարի 6 ամիս</td><td>56</td></tr>
<tr><td>5 տարի 6 ամիս</td><td>57</td></tr>
<tr><td>4 տարի 6 ամիս</td><td>58</td></tr>
<tr><td>3 տարի 6 ամիս</td><td>59</td></tr>
<tr><td>2 տարի 6 ամիս</td><td>60</td></tr>
<tr><td>1 տարի 6 ամիս</td><td>61</td></tr>
<tr><td>6 ամիս</td><td>62</td></tr>
</table>
3. նախագծի հոդված 1-ի 2-րդ մասի 1-ին կետից հանել «մինչև 2014 թվականի հունվարի 1-ը առնվազն 10 օրացուցային տարին աշխատել է վնասակար, ծանր պայմաններում» բառերը:
4. Նախագծի հոդված 1-ի 2-րդ մասի առաջին պարբերությունիցհետո ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.
«Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը 1-10 օրացուցային տարի վնասակար, ծանր պայմաններում աշխատած անձանց արտոնյալ պայմաններով կենսաթոշակ է նշանակվում ըստ հետևյալ սանդղակի.</td><td>շարունակում են մնալ վնասակար, կսահմանվեն NN 3 և 4 ցուցակներով:</td></tr>
</table>

<table>
<tr><th>ՀՀ</th><th>Առաջարկության հեղինակը</th><th>Առաջարկությունը</th><th>Եզրակացություն</th></tr>
<tr><td></td><td></td><td>
<table>
<tr><th>Վնասակար, ծանր պայմաններում աշխատանքային ստաժ</th><th>Արտոնյալ կենսաթոշակի անցնելու տարիք</th></tr>
<tr><td>10 տարի</td><td>59</td></tr>
<tr><td>7-9 տարի</td><td>60</td></tr>
<tr><td>4-6 տարի</td><td>61</td></tr>
<tr><td>2-4 տարի</td><td>62</td></tr>
<tr><td>1-2 տարի</td><td>62 տարի 6 ամիս</td></tr>
</table>

Այս քայլով կապահովվի սոցիալական հավասարության և սոցիալական արդարության սկզբունքը, որը հանդիսանում է սոցիալական պետության հիմքը:
Պետք է հաշվի առնել, որ անգամ 1 տարի վնասակար պայմաններում աշխատելը հանգեցնում է մարդու հետագա աշխատունակության անկման, դրանով իսկ քաղաքացին ուղղակիորեն անհավասար պայմաններում է հայտնվում ոչ վնասակար պայմաններում աշխատած մարդու հետ կենսաթոշակային իրավունքից միանման օգտվելու տեսանկյունից:
Նույնը վերաբերում է նաև վնասակար, ծանր պայմաններում (ցուցակ 2) աշխատած անձանց համար արտոնյալ կենսաթոշակ նշանակելուն: Այստեղ էլ՝ նախագծով առաջարկվում է 10 օրացուցային տարի սահմանել մինչև 2014 թվականի հունվարի 1-ը վնասակար, ծանր պայմաններում (ցուցակ 1) աշխատած անձանց համար:</td><td></td></tr>
<tr><td>3.</td><td>ՀՀ կառավարություն</td><td>1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող՝ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում և 2-րդ մասի 2-րդ կետում «աշխատատեղերում» բառը փոխարինել «պաշտոններում» բառով:</td><td>Ընդունվել է:</td></tr>
</table>

ՀՀ	Առաջարկության հեղինակը	Առաջարկությունը	Եզրակացություն
		2. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «աշխատատեղերի» բառը փոխարինել «պաշտոնների» բառով:	